

եանցի Տէր Յակոբին. Զուղայեցի Մահտեսի Մարգարին եւ Մահտեսի Գրիգորին. Թուին Հայոց ՊՃԽԳ²⁷ : Այս արձանագրութիւնը կը գտնուի վիմի մը վրայ, որ եկեղեցւոյ նորոգութեան ժամանակ պատէն վար առնուած է* եւ եկեղեցւոյն մէջ կը պահուի²⁸ :

Եթէ Հայ թուականն քրիստոնէականին հետ համեմատենք, կը տեսնենք որ ասոնք լիուրի կը միաբանին իրարու. վասն զի՝ ինչպէս յայտնի է, Հայք Մովսէս Բ. Եղեվարդեցի կաթողիկոսի ժամանակ՝ յամին 551 ի Գուին²⁹ գումարեալ ժողովէն կը սկսին իրենց թուականն, այն է՝ 11 Յուլ. 552. ուրեմն 844ին վրայ յաւելունք 551, եւ կ'ունենանք Եաշի Հայ եկեղեցւոյն հիմնարկութեան տարին՝ 1395 :

Թէ արդեամբք 1395ին շինուած է այս եկեղեցին՝ կը հաստատուի անտարակուսելի եղանակաւ նաեւ 800ին (1351) ի Կաֆա գրուած Աւետարանի մը մէջ՝ 900ին (1451) գրուած յիշատակարանէ մը, ուր յայտնապէս կ'ըսուի որ նոյն Աւետարանն Եաշի Ս. Աստուածածնի եկեղեցւոյն նուիրուած է³⁰ :

* Արձանագրութեանս հայերէն քննազին մեզի շնորհեց Պր. Սողոմոն Դրանխուեանց : Այս քննազին մէջ կայ նաեւ հետեւեալ յաւելումն. «Եւ այժմ՝ վերանորոգեցաւ ի ձեռն քարեպաշտօն իշխանաց եւ համայն ժողովրդոց աշխատանքս եւ ծախիւքն : Ի թուականին Փրկչին 1803ին :», Այս վէմն թէ եւ եկեղեցւոյ նորոգութեան ժամանակ վար առնուած էր, ինչպէս կը յիշէ նեղինակն, սակայն այժմ՝ վերստին նոյն տեղն հաստատուած է :